

**ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻ ԳՐԱՎԱԴՐՄԱՄԲ ՍՊԱՌՈՂԱԿԱՆ ՎԱՐԿԵՐԻ ՏՐԱՄԱԴՐՄԱՆ ՀԱՄԱՐ
ԱՆՀՐԱԺԵՇՏ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԻ ՑԱՆԿ**

- Դիմում-հայտ
- Քաղաքացու անձը հաստատող փաստաթուղթ (ՀՀ քաղաքացի չհանդիսացող անձանց համար՝ անձը հաստատող փաստաթուղթ՝ ՀՀ տարածքում մշտական հաշվառման վայր ունենալու վերաբերյալ համապատասխան նշումով(տվյալ դեպքում անհրաժեշտ է ՀՀ քաղաքացի հանդիսացող անձի երաշխավորությունը) ինչպես վարկառուի /համավարկառու/, այնպես էլ վաճառողի
- Սոցիալական ապահովության քարտ (առկայության դեպքում)
- Ամուսնական կարգավիճակը հավաստող փաստաթուղթ (ամուսնության, ամուսնալուծության, ամուսնու մահվան վկայականներ) և այլն (առկայության դեպքում), երեխաների ծննդյան վկայականներ (առկայության դեպքում)
- Հաճախորդի հետ բնակվող (խնամակալության տակ գտնվող) անձանց անձնագրերը
- Տեղեկանք բնակության վայրից (3-րդ ձև)
- Տեղեկատվություն (պետ. ռեզիստրից, դեպոզիտարիայից, ռեեստրավարից) իրավաբանական անձանց կանոնադրական կապիտալում 10% և ավելի մասնակցության վերաբերյալ
- Բանկերում ցպահանջ և ժամկետային ավանդային հաշիվների առկայության դեպքում, տեղեկանք վերջին ամսվա շրջանառության և մնացորդի վերաբերյալ
- Տեղեկանք աշխատավայրից, որտեղ պետք է նշվի զբաղեցրած պաշտոնը և ամսական աշխատավարձի չափը և/կամ հայտարարություն եկամուտների վերաբերյալ (երբ Հաճախորդը և (կամ) երաշխավորը չեն աշխատում)
- Աշխատանքային գրքույկի կամ աշխատանքային պայմանագրի պատճենը (բացառությամբ՝ պետական ծառայողների)
- Տեղեկություններ ընտանիքի անդամների եկամուտների վերաբերյալ
- Անշարժ գույքի նկատմամբ սեփականության, սեփականության իրավունքի ծագման (առուվաճառքի, նվիրատվության պայմանագիր և այլն) համար հիմք հանդիսացող, ինչպես նաև այլ իրավունքներ հաստատող փաստաթղթեր
- Այն դեպքում, երբ որպես երաշխավոր հանդես է գալիս իրավաբանական անձ, ապա իրավաբանական անձին վերաբերվող փաստաթղթերը՝ հիմնադիր փաստաթուղթը (կանոնադրություն)՝ հետագա բոլոր փոփոխություններով և լրացումներով հանդերձ, Պետական ռեզիստրի գրանցման վկայական (իր ներդիրներով, ներառյալ ընկերության Տնօրենի վերաբերյալ տեղեկության ներդիրը), ֆինանսական հաշվետվությունները և այլն
- Այլ լրացուցիչ փաստաթղթեր, որոնց անհրաժեշտությունը որոշում է վարկային կազմակերպությունը: